Սպանդարյան

Վարչական ղեկավար՝ Ավետիք Մխիթարյան
Հեռ: 094 30 32 38
Մակերես՝ 8.6կմ²
Բնակչություն՝ 1600
Ինդեքս՝ 3023
lusine.kyureghyan.05@mail.ru

Սպանդարյանը գտնվում է Հայաստանի Շիրակի մարզում, Արթիկ համայնքի վարչական շրջան է, Արթիկից գտնվում է 8.3 կմ հեռավորության վրա, մարզկենտրոն Գյումրիից՝ 22 կմ հարավ-արևելք, Մանթաշ գետի աջափնյակում: Սպանդարյանը գտնվում է Շիրակի դաշտի նախալեռնային մասում, ծովի մակարդակից 1825 մետր բարձրության վրա: Այն փռված է Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջին:

Շիրակի մարզի Սպանդարյան գյուղը հիմնադրվել է 1829 թվականին սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլսի պայմանագրի 13-րդ հոդվածով՝ Կարսի փաշայությունից 2467 ընտանիքների վերաբնակեցման արդյունքում: Սպանդարյան գյուղի նախնիները եկել են Կարսի փաշայության Բերդիկ գյուղից: Իսկ 1918-1920 թվականներին գյուղը վերաբնակեցվել է Արևմտյան Հայաստանի այլ գավառներից:

Գյուղը Սպանդարյան է անվանակոչվել 1946 թվականի մայիսի 31-ին: Մինչ այդ կոչվել է Ղուլիջան, որը հավանաբար բնակավայրի ուրարտական շրջանի Կուլիաինի անվան ձևավորման տարբերակն է:

Գյուղը որպես բնակավայր հայտնի է եղել դեռևս բրոնզի դարաշրջանում: Այդ մասին են վկայում գյուղի տարածքից հայտնաբերված բազմաթիվ բրոնզե զենքեր, զարդեր և խեցեղեն, որոնց մի մասը պահվում է դպրոցի պատմության թանգարանում: Իսկ Կիկլոպյան ամրոցի

մնացորդները և ՈՒրարտական սեպագիր արձանագրությունը վկայում են այն մասին, որ գյուղը բնակավայր է եղել նաև մինչ ուրարտական և ուրարտական շրջանում: Սեպագիր արձանագրությունը թողել է Արգիշտի առաջինը իր՝ դեպի Շիրակ կատարած արշավանքի ժամանակ իր կառավարման երկրորդ տարում՝ այսինքն Ք.Ա 785 թվականին:

Արձանագրության տեքստը հետևյալն է. <<Ես՝ Արգիշտի արքաս՝ Մենուայի որդին, Խալդ Աստծո օգնությամբ Էրեբունիից արշավեցի Կուլիահինի ցեղի վրա, ճնշեցի ապստամբությունը, հիմնեցի բերդաքաղաք >>: Արձանագրությունը գտել է տեղացի Ներսես Հարությունյանը, որի մասին հայտնել է Մեսրոպ եպիսկոպոս Սմբատյանին: Վերջինս էլ հնագետ Ալեքսանդր Երիցյանին: 1884 թվականին առաջին անգամ այն վերծանել է անգլիացի հնագետ Սեյսը և խմբագրվել է <<Արարատ >> ամսագրում: Հետագայում շատ արշավախմբեր ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և այլ երկրներից ուսումնասիրել են արձանագրությունը: Նիկողայոս Ադոնցը կազմել է ուրարտական արձանագրությունների ցանկը, որտեղ Ղուլիջանի արձանագրությունը 17-րդ տեղում է, տեքստը համառոտ է. << Ես՝ Արգիշտի թագավորս, գրավեցի Կուլիահինի երկիրը, Ալրուբանի քաղաքը>>: Արձանագրությանը անդրադարձել է նաև Լեոն: Այն հիշատակվում է Բիայնիայի գրքում:

Գյուղը Սպանդարյան է կոչվել հեղափոխական Սուրեն Սպանդարյանի անունով:

Գյուղը ապրում է իր բնականոն կյանքով, ունի եկեղեցի, մեր համագյուղացի՝ ՀՀ Ազգային հերոս Վիտյա Այվազյանի անունը կրող միջնակարգ դպրոց: Սոցիալապես աղքատ գյուղ է, բայց ունի բավական հարուստ ավանդույթներ:

Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, անասնապահությամբ, ճակնդեղի և ծխախոտի մշակությամբ: Գյուղում կան բազալտի պաշարներ: Գյուղը հարուստ է մեր հայրենի պատմության և մշակութային խոսուն վկաներ հանդիսացող բազմաթիվ հուշարձաններով՝ բրոնզի դարաշրջանի պեղված և չպեղված դամբարաններ, նախաուրարտական շրջանի Կիկլոպյան ամրոց իր միջնաբերդով, ուրարտական շրջանի Արգիշտի Ա-ի սեպագիր արձանագրություն, նույն ժամանակաշրջանի քարանձավներ, 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ջրաղացներ գերեզմանոց և «Կուլիանի» պատմաերկրագիտական թանգարան: Ինչպես նաև Սպանդարյանը ունի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի: